ԳԵՈՐԳԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ս. ՎՐԱՑՅԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Բ. ԼԵԳՐԱՆԻ ՀԵՏ ԵՒ ՀՀ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

1920 թ. նոյեմբերի վերջին Հայաստանի Հանրապետության ներքին եւ արտաքին դրությունը խիստ բարդանում է: Հայոց բանակը չկարողանալով դիմադրություն ցույց տալ՝ նահանջում է: Թուրքական զորքերը, գրավելով Սարիղամիշը, Կարսը, իսկ նոյեմբերի 7-ին՝ Ալեքսանդրապոլը, վտանգի տակ են դնում ՀՀ անկախությունը: Ստեղծված պայմաններում Խորհրդային Ռուսաստանը փորձում է արագացնել ՀՀ խորհրդայնացման գործընթացը:

Հայաստանի Հանրապետության բյուրո–կառավարությունը կարելի է բնորոշել որպես մի կառավարություն, որն ամեն ջանքերի գնով ցանկանում էր պահել ՀՀ անկախությունը: Սակայն, 1920թ. նոյեմբերին, երբ Ս. Վրացյանը բանակցություններ էր վարում Ռուսաստանի լիազոր–ներկայացուցիչ Բ. Լեգրանի հետ, վերջնականապես համոզվեց, որ երկրի խորհրդայնացումն արդեն անդառնալի երեւույթ է: Բայց, հավատարիմ մնալով անկախության պահպանման իր գաղափարին, չուզեց իր իսկ ձեռքով վավերացնել խորհրդայնացման ակտը եւ հրաժարական տվեց: Նոյեմբերի 23-ին Խորհրդարանի արտահերթ նիստում հրաժարականն ընդունվում է եւ հանձնարարվում է Հ. Քաջազնունուն՝ կազմելու նոր կառավարություն, սակայն նա հրաժարվում է պատճառաբանելով, որ ինքը եկել է այն համոզման. «որ հարկավոր է «ձախ» տարրերից կազմել կառավարութիւնը»[1]:

«Ձախ» տարրեր ասելով նաեւ շատերը հասկանում էին հիմնականում Ս. Վրացյանին եւ Դրոյին, որոնք բոլշեւիկների հետ լեզու գտնելու կողմնակից էին: Կառավարության հրաժարականի կապակցությամբ հատուկ որոշում է ընդունում նաեւ ՀՅԴ բյուրոն. «Հաշվի առնելով միջազգային քաղաքականության մեջ առաջացած մի շարք կարեւոր երեւույթները, ուժերի եւ շահերի նոր դասավորությունը, ՀՅԴ բյուրոն անհրաժեշտ նկատեց դուրս գալ կառավարությունից, որպեսզի նոր կառավարությունը, նոր հոգեբանական պայմաններով, սկսի հաշտության բանակցությունները, վերջ դնի պատերազմին»[2]:

Հասկանալի է, որ այստեղ խոսքը վերաբերում է ռուսների հետ բանակցություններին: Նրանց հետ բանակցությունների գնալ՝ նշանակում էր վերջ տալ Հայաստանի անկախությանը, քանի որ արդեն Բ. Լեգրանը կոշտացրել էր իր դիրքորոշումը եւ խոսում էր վերջնագրի լեզվով: Նույն օրը՝ նոյեմբերի 23-ին, կազմվում է ՀՀ վերջին կառավարությունը Ս. Վրացյանի գլխավորությամբ, որի առանցքային դեմքը թերեւս Դրոն էր: Ս. Վրացյանն անմիջապես սկսում է բանակցությունները Լեգրանի հետ: Բանակցություններին անդրադառնալը կարեւորում ենք վերջինիս եւ ընդհանրապես բոլշեւիկների դիրքորոշումների փոփոխության բացահայտման առումով:

---

1 **Ս. Վրացեան**, Կեանքի ուղիներով, հատ. Ե, Պէյրութ, 1966, էջ 181:

2 «Յառաջ», 30 նոյեմբերի, 1920:

«Ստանձնելով արտաքին գործոց նախարարությունը, - գրում է Ս. Վրացյանը, -ես այցելութիւն տուի օտար պետութեանց ներկայացուցիչներին: Սով. Ռուսաստանի լիազօր ներկայացուցիչ Լէգրանի հետ ունեցած կարճ զրոյցից պարզուեց, որ նա միայն մի մտահոգութիւն ունի - ե՞րբ պիտի Հայաստանի կառավարութիւնը համաձայնի կարմիր զօրամասեր մտցնել Հայաստան:

Ես պարզաբանեցի, որ նոր կառավարութիւնն էլ, նախորդի պէս, ամուր կանգնած է անկախութեան տեսակէտի վրայ, բայց իր քաղաքական ու ընկերային համակրանքով հակուած է դէպի Սով. Ռուսաստանը:

Լեգրանին, ըստ երեւոյթին, այդքանը չէր զոհացնում. նա՝ հեգնական ժպիտը շրթունքներին եւ ձեռքերը շփելով՝ հասկացնում էր, **որ դրական օգնութիւն ստանալու համար անհրաժեշտ է դրական գործ կատարել, այսինքն՝ մեր սեփական ձեռքերով Հայաստանը դարձնել խորհրդային»**[3]:

Այս մեջբերումից եզրակացնում ենք, որ դեռեւս ՀՀ կառավարությունը շարունակում էր հույսեր փայփայել, թե կարող է առանց խորհրդայնացման, սոսկ ռուսական կողմնորոշմամբ պահպանել իր անկախությունը, իսկ Խորհրդային Ռուսաստանն արդեն հաստատակամ էր Հայաստանը խորհրդային տեսնելու իր որոշման մեջ, քանզի մյուս կողմից էլ չէին հավատում թուրքերի անկեղծությանը. «թուրքերը խորամանկում են, հետապնդում սեփական նպատակները» Վ. Լենինին ուղղված հեռագրում նշում էր Ի. Ստալինը[4]:

Երկրորդ հանդիպման մասին Ս. Վրացյանը հետեւյալն է գրում. « Իմ երկրորդ տեսակցութիւնը Լէգրանի հետ վերաբերում էր այն հարցերին, որոնց մասին նա արդէն բանակցութիւններ վարել էր նախորդ արտաքին գործոց նախարարի հետ– Հայաստանի եւ Սովետական Ռուսաստանի փոխյարաբերութիւն, ռուսական օգնութիւն հայ–թրքական վէճի մէջ, ռուս–հայկական համաձայնութիւն եւ այլն:

Լեգրանի բոլոր մտքերը պտտում էին մի կէտի շուրջ–հիմա այլեւս ուշ է այդ մասին խօսելը: **Նա առաջարկում էր անմիջապէս յետ կանչել մեր պատուիրակութիւնը Ալեքսանդրապոլից, խզել ամէն յարաբերութիւն թուրքերի հետեւ ռուսական զօրք մտցնել Հայաստան**: Նա մեղադրում էր Հ. Օհանջանեանին եւ Ռ. Տէր-Միհնասեանին, որոնք ժամանակին չէին ընդունել իր պայմանները եւ դրանով իբր թէ, պատճառ էին դարձել, որ թուրքերը գրաւեն Կարսն ու Ալեքսանդրապոլը»[5]:

Ս. Վրացյանի այս տողերը հետաքրքիր են հատկապես այն տեսանկյունից, որ փաստորեն հաստատում են, որ Ռ. Լեգրանը դեմ էր հայ–թուրքական բանակցություններին: Սա նշանակում է, որ այդ բանակցությունները ամենեւին չեն ընթացել ռուս-թուրքական հատուկ պայմանավորվածությամբ: Ընդդեմ դաշնակիցների միավորված բոլշեւիկներն ու քեմալականները Հայաստանի հարցում ներքին, թաքուն մրցակցության մեջ են եղել: Նրանք պայքար են մղել Հայաստանի բաժանման համար, սակայն, դեռեւս պարզ չէր թե ում ինչ է հասնելու: Իսկ Ռ. Լեգրանը դժգոհ էր բյուրո–կառավարությունից, որի կողմից իր պայմանները չընդունելու դեպքում հնարավոր եղավ թուրքերի համար, գրավել Կարսն ու Ալեքսանդրա-

3 **Ս. Վրացեան**, նշվ. աշխ., էջ 185: Ընդգծումը՝Գ. Գ.:
4 ՀԱԱ, հավաքածու 1, գ. 2, թ. 135:
5 Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 186-187: Ընդգծումը՝Գ. Գ.:

պոլը: Թերեւս չէինք սխալվի, եթե պնդենք, որ ռուսներին ավելի շատ մտահոգել է Կարսի մարզը դարձյալ ռուսական տեսնելը, քան Արեւմտյան Հայաստանը: Իսկ հիմա, երբ Կարսն արդեն գրավված էր, թուրքերին ավելի հետ մղելը նրանց համար դառնում էր պրոբլեմային, հատկապես, այդ առումով ոչինչ չկարողացավ անել Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Մդիվանին, որը մեկնել էր Ալեքսանդրապոլ, որպես միջնորդ հայ-թուրքական բանակցություններին: Այնուհետեւ Ս. Վրացյանը հասկացնում է, որ Հայաստանի խորհրդայնացումը հավասար կլինի նրա անկախության ջնջման, որին Բ. Լեգրանը հեգնական պատասխան է տալիս, թե «Կովկասեան, այսպէս կոչուած, հանրապետութիւնների համար մի ճանապարհ կայ միայն. նրանք կամ կախուած պիտի լինեն Իմպերիալիստական Անգլիայից, կամ սոցիալիստական Ռուսաստանից: Ուրիշ ելք չկայ»[6]:

Մինչդեռ Ս. Վրացյանի կառավարությունը դեռեւս հույսեր էր փայփայում՝ փրկելու Հայաստանի անկախությունը:

Այնուհետեւ, Ս. Վրացյանը մտավախություն է հայտնում, որ եթե Ալեքսանդրապոլից եւ կանչվի պատվիրակությունը, ապա թուրքերը չե՞ն շարժվի դեպի Երեւան եւ Դարալագյազ, որի դեպքում անարժեք կլինի բոլշեւիկների օգնությունը: Բ. Լեգրանը հավաստիացնում է, որ թուրքերը դուրս չեն գա ռուս զորքի դեմ, բայց Ս. Վրացյանը չի համաձայնում: Նա առաջարկում է ռուսական զորքեր կենտրոնացնել Հայաստանի սահմանների մոտ, որը կարող է Հայաստան մտնել միայն այն դեպքում, երբ դիվանագիտական միջամտությունն ապարդյուն անցնի եւ թուրքերը շարունակեն պատերազմը: Չենք կարծում, որ տրամաբանությունից զուրկ են եղել Բ. Լեգրանի առարկությունները, այն է՝ սահմանների մոտ զորքերի կուտակումը կարող է առաջ բերել թուրքերի դժգոհությունը՝ առիթ հանդիսանալով անցանկալի խոսակցությունների: Թուրքերին անհրաժեշտ է կանգնեցնել կատարված փաստի առաջ եւ մինչեւ Ալեքսանդրապոլ գրավել բոլշեւիկյան զորքերով, որից հետո կարելի է խոսել Կարսի մասին[7]:

Մենք արդեն վերեւում համոզվեցինք, որ ռուսները վաղուց էին սրան ձգտում, բայց Հայաստանի ղեկավարությունը ցանկանում էր պահել պատմության բացառիկ նվերը՝ Հայաստանի անկախությունը:

Ս. Վրացյանն այսպես է ներկայացնում իր կառավարության քաղաքական դիրքորոշումն ստեղծված պայմաններում. «Մի կողմից՝ բանակցելով Լէգրանի հետ, մենք միւս կողմից աշխատում էինք արագացնել հաշտութեան բանակցութիւնները: Ռուսական զօրամասեր Հայաստան մտցնելուց մենք խուսափում էինք՝ այդ քայլը նկատելով ոչ միայն մահ անկախութեան համար, այլեւ առիթ պատերազմը թուրքերի հետ վերսկսելու եւ Հայաստանի մնացած մասերն էլ թուրքերի ոտքի կոխան դարձնելու: Ոմանց մէջ հույս կար նաեւ, որ թուրքերը՝ նախատեսելով ռուսական միջամտութիւնը՝ կը լինեն չափաւոր եւ հայերին չեն մղի բոլշեւիկների գիրկը: Մեր այն ժամանակուայ հասկացողութեամբ թուրքերի համար ցանկալի չպիտի լինէր Հայաստանի գրաւումը ռուսներից: Նրանց շահերի տեսակէտից աւելի գերադասելի պիտի լինէր իրենց կողքին ունենալ անկախ Հայաստան, քան բոլշիկներին, որոնք, վերջ ի վերջոյ, նոյն ռուսներն էին եւ որոնց արտաքին քաղաքականութիւնը,

6 **Ս. Վրացեան**, նշվ. աշխ., էջ 187:
7 **Ս. Վրացեան**, նշվ. աշխ.,էջ 187-188:

ըստ էութեան, կրկնութիւնն էր՝ Սազոնովների եւ Միլիւկովների աշխարհակալական ծրագիրների»[8]:

Ցավոք, այս անգամ իրավիճակը բոլորովին այլ քայլեր էր թելադրում: Թուրքերն ու ռուսներն այս անգամ պատերազմական դրության մեջ չէին միմյանց հանդեպ եւ գլոբալ հարցերում լինելով դաշնակիցներ, իրար հետ պայքարում էին Հայաստանը բաժանելու համար: Այդ քիչ անց խոստովանում է եւ Ս. Վրացյանը: Փաստորեն Ս. Վրացյանի կառավարությունը փորձում է շարունակել նախորդի կուրսը, բայց քանի որ թուրքերն արդեն շատ էին առաջացել, Բ. Լեգրանը պետք է խոսեր վերջնագրի լեզվով: Մենք այն կարծիքին ենք, որ Ս. Վրացյանի կառավարությունը Բ. Լեգրանի խորհրդին հետամուտ՝ պետք է առանց հապաղելու Հայաստանը հռչակեր խորհրդային եւ հետ կանչեր Ալ. Խատիսյանի պատվիրակությունը: Այս դեպքում թուրքերը հազիվ թե համարձակվեին առաջանալ եւ չէր կնքվի Ալեքսանդրապոլի բազմիցս շահարկված պայմանագիրը, որը հավասարազոր էր կապիտուլյացիայի: Այդ մասին ենթադրելու հիմք է տալիս նոյեմբերի 28-ին Բ. Լեգրանի ուղարկած նամակի հետեւյալ մասը, որն իր գրքում մեջբերում է Լ. Խուրշուդյանը, անելով բոլորովին այլ եզրակացություն. «Մեզ սպառնում է հաղթական քեմալականացման գործընթացում խեղդվելու վտանգը՝ նախ Հայաստանում, իսկ հետո՝ կարող է պատահել եւ Վրաստանում: Անգամ ընկ. Մդիվանին, չնայած քեմալականների մոտ կարճատ եւ գտնվելուն, վստահությամբ է համակվել Հայաստանի խորհրդայնացման նրանց ծրագրերի նկատմամբ եւ առաջարկում է այսօր օգտագործել թուրքերի կողմից ստեղծված «Խորհրդային Հայաստանի հեղկոմը»:

Հայ-թուրքական հարցում մենք չունենք որոշակի գիծ եւ քարշ ենք գալիս դեպքերի պոչից»[9]:

Խնդիրը այն էր, որ խորամանկ թուրքերն ստեղծել էին վերոհիշյալ հեղկոմը ցույց տալու համար, որ իրենք գործում են բոլշեւիկների հետ նույն ծրագրով, իսկ որպես միջնորդ՝ Ալեքսանդրապոլում գտնվող Բ. Մդիվանին հավատացել էր դրան՝ անտեսելով Կարսի հարցը, տարվել էր թուրքերի ծրագրերով: Սույն մեջբերումը վկայում է, որ թուրքերի եւ ռուսների միջեւ փոխհամաձայնեցված գործունեություն Ալեքսանդրապոլում չկար եւ ռուսների համար հրատապ էր դառնում թուրքերին Հայաստանի խորհրդայնացմամբ զսպելը:

Եւ արդեն նոյեմբերի 28-ին Հայաստանի սահմանի մոտ կուտակվում են կարմիր զորքեր, իսկ հաջորդ օրը մի քանի զորամասեր մտնում են Քարվանսարա: Ս. Վրացյանի բողոքը նախ զարմացնում է Բ. Լեգրանին, որը նոյեմբերի 30-ին հատուկ գրությամբ ցավ է հայտնում «թյուրիմացության համար», բայց կես ժամ անց ստացվում է ժամադրության խնդրանք վերջինիս կողմից: Խնդրվում է, որ ներկա լինի եւ Դրոն: «Ժամը 12-ին Լեգրանը իր քարտուղարի հետ եկաւ մօտս եւ Դրօի ներկայութեամբ, գրեթէ բառացի, յայտնեց հետեւեալը.

-Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան Կենտրոնական կոմիտէն որոշել է Հայաստանում մտցնել խորհրդային կարգեր: Հայաստանի Յեղկոմը արդէն մտել է Հայաստանի սահմանները: Ընկերնե՛ր, դանդաղելը յղի է ծանր հետեւանքներով: Ես ուզում եմ իմանալ, թէ ի՞նչ է լինելու ձեր դիրքը:

---

8 **Ս. Վրացեան**, նշվ. աշխ., էջ 189:

9 **Լ. Խուրշուդյան**, Հայաստանի բաժանումը 1920 թ., Երեւան, 2002, էջ 286:

Ես յանկարծակիի եկած ու վրդովուած՝ բողոքեցի այդ բռնութեան դէմ: Յուզուած՝ բողոքեցին Դրօն: Բայց, Լէզրանը այդ քայլը համարում էր անխուսափելի, քանի որ մենք ինքներս յամառում ու ձգձգում էինք»[10]:

Այսպիսով, Կենտկոմը, ելնելով թուրքերին կանգնեցնելու իր մտայնությունից, դիմում էր կտրուկ գործողությունների: Դա երևում է Ի. Ստալինի՝ Մոսկվայից նոյեմբերի 30–ին Գ. Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրից. «Քեմալականների հետ Կարսի պատճառով չպետք է պատերազմել, բայց ամեն ինչում նրանց գիջելը ևս անթույլատրելի է: Պետք է քեմալականներից Ալեքսանդրապոլը գրավել խորհրդայնացող Հայաստանի համար: Եթե Խորհրդային Հայաստանը չի պահանջում, որ ռուսական զորքերը մնան Հայաստանում, այդ դեպքում մենք չենք առարկում խորհրդայնացմանը: Խնդրում ենք ստուգել Կարաբեքիրի հայտարարությունը զորքերը Հայաստան մտցնելու ևթուրքական զորքերը Արևմտյան ռազմաճակատ փոխադրելու մասին, ևեթե նրա հայտարարությունը լուրջ դուրս գա, մեզ հիմնավոր տեղեկություն տվեք այդ մասին: Կարևոր է ստուգել՝ արդյոք Կարաբեքիրը մեր զորքերը Հայաստան մտցնելու առաջարկությամբ չի մտածում Անտանտի հետ մեզ վաղաժամ կոնֆլիկտի մեջ քաշել ևդրանով ազատ արձակել Անտանտի ձեռքերը Բաթումում դեսանտ իջեցնելու համար: Կարելի՞ է արդյոք կարծել, որ քեմալականները չեն հեռացել մեզանից դեպի Անտանտը»[11]:

Այսպիսով, այս գրությամբ վերջնականապես պարզ է դառնում, որ ա) Ռուսաստանը ճնշում չէր գործադրելու Թուրքիայի վրա Կարսի համար, վախենալով, որ դա կհանգեցնի նրա հետ պատերազմի, ինչը նա չէր ուզում, վախենալով Անտանտ-Թուրքիա մերձեցումից, ինչից ենթադրելի էր նրանց պատերազմն իր դեմ, բ) հասնել նրան, որ Ալեքսանդրապոլը մաս կազմի խորհրդայնացված Հայաստանի, գ) թեև Ռուսաստանը օգնել էր Մ. Քեմալին՝ նպաստել նոր Թուրքիայի առաջացմանը, բայց նրա հետ չուներ ռազմական դաշինք, որը նշանակում է, որ Հայաստանի վրա հարձակման առումով, նրանք չեն գործել համատեղ, որն ընդհանուր առմամբ ընդունված է հայ պատմագրության կողմից: Այստեղից էլ կարելի է եզրակացնել. **Հայաստանի բաժանումը տեղի ունեցավ Ռուսաստանի ևթուրքիայի լռին ևվարագուրված պայքարի արդյունքում ևոչ թե նախապես ծնված պայմանագրի կամ պայմանավորվածության: Դրանում մեծ բաժինը հասավ Թուրքիային, ավելի շատ պայմանավորված ոչ թե Ռուսաստանի համանման ցանկությամբ, այլ վախով, որ իրենից Դաշնակիցների կողմը կվանի իր իսկ ուժեղացրած Քեմալին:** Չպետք է նաև պնդել, թե Հայաստանը վերջնականապես բաժանվեց այս օրերին, քանզի անորոշ էին Զանգեզուրի, Ղարաբաղի ևնախիջևանի ճակատագրերը, որոնք որոշվեցին 1921 թվականին:

Հայաստանի խորհրդայնացման վերջնագիրը քննարկվում է նոյեմբերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերը ՀՅԴ բյուրոյի, Հայաստանի ԿԿ-ի, խորհրդարանական հատվածի, կառավարության անդամների համատեղ նիստում: Տեղի է ունենում բուռն քննարկում: Ոմանք գտնում են, թե պետք է կռվել բոլշևիկների դեմ: Հակառակ կարծիքին էին Հ. Քա-

10 **Ս. Վրացեան**, անդ, էջ 192:

11 **Ս. Տ. Ալիխանյան**, Գ. Կ. Օրջոնիկիձեն ևսովետական իշխանության հաստատումը Հայաստանում, Երևան, 1974, էջ 44:

ջազնունին, Դրոն եւ Ռ. Տեր-Մինասյանը: Նրանք «Կռիվը բոլշեւիկների դէմ համարում էին աղեւաւոր, որովհետեւ, շատ հավանական էր, որ կռուի դէպքում կը ստեղծուէր երկու ճակատ, իսկ Հայաստանը անկարող էր միաժամանակ կռուել եւ՛ բոլշեւիկների եւ՛ թուրքերի դէմ: Երկիրը կարոտ էր հանգստի. եթէ բոլշեւիկները կարող են տալ այդ հանգիստը, թո՛ղ տան, չխանգարենք: Մեր պարտականութիւնն է ժողովուրդը փրկել փոթորիկներիձեւ ո՛չ թէ նրան փոթորիկների մէջ նետել:

Բացի այդ, -շարունակում է Ս. Վրացյանը, -նախորդ զինուորական նախարար Ռուբէն Տէր-Մինասեանը յայտնում էր, որ հայ զօրքը ի վիճակի չէ որեւէ պատերազմ վարելու, իսկ ներկայ զինուորական նախարար Դրօն աւելացնում էր, որ առհասարակ, հայ զօրքը չի կռուի ռուս զօրքի դէմ: Հետեւաբար, կռուի ամէն կոչ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ աններելի մի արկածախնդրութիւն:

Ես էլ համոզուած էի, որ մենք խոհեմութիւնը պիտի ունենայինք խուսափելու նոր պատերազմից, այն էլ Ռուսաստանի դէմ: Քանի որ մեր հաշիւները բոլշեւիկների հետ ընդհանուր լեզու գտնելու մասին սխալ էին դուրս եկել, պէտք էր հրաժարուէինք իշխանութիւնից յօգուտ բոլշեւիկների՝ գէթ ձեւականօրէն ապահովելով Հայաստանի անկախութեան գաղափարը»[12]:

Բուռն վիճաբանությունները շարունակվում էին, երբ Ս. Վրացյանին ուղիղ հեռագրաթելի մոտ է կանչում Ալ. Խատիսյանը՝ Ալեքսանդրապոլից: Նա հաղորդում է, որ թուրքերը ներկայացրել են հաշտության պայմանները եւ տվել են վերջնագիր՝ 48 ժամում ընդունելու կամ մերժելու: Պայմանները ծանր էին: Հատկապես վրդովեցուցիչ էր նրանց պահանջը Սուրմալուի նկատմամբ: Հարկ ենք համարում մեջբերել Ս. Վրացյանի հետեւյալ տողերը. «Ընկ. Խատիսեանը խնդրում էր առանց ուշացնելու տալ հրահանգներ, **որովհետեւ թուրքերը շատ էին շտապեցնում: Երեւանում կատարուող դէպքերը, որոնց մասին նրանք զարմանալի կերպով լաւ էին տեղեակ, ջղայնացնում էին նրանց: Թուրքերը, ըստ երեւույթին, վախենում էին իրենց դաշնակից բոլշեւիկների խաղերիձեւ շտապում էին օր առաջ ստորագրել հաշտութիւնը»**[13]:

Չենք կարծում, որ թուրքերը վախենում էին բոլշեւիկների խաղերից: Դարձապես, ինչպես պարզ երեւում է ընդգծվածից, նրանք տեղյակ էին բոլշեւիկների վերջնագրից եւ ցանկանում էին Հայաստանի խորհրդայնացումից առաջ նրա հետ կնքել պայմանագիր,քանի որ հնարավոր էր, որ չկարողանային: **Սակայն, նրանք պայմանագիր պարտադրեցին ստորագրել Ալ. Խատիսյանին, որն արդեն չէր ներկայացնում Հայաստանի իշխանությունը, իսկ ռուսները դրան չընդդիմացան, որովհետեւ իրենց ձեռնտու էր Մ. Քեմալի հետ հարաբերություններում լարվածություն չմտցնելը, քան թե 1914թ. Կարսի սահմանների պահանջը:** Ահա թե ինչու նրանք ստորագրեցին անօրինական մի պայմանագիր:

Ալ. Խատիսյանի հետ խոսակցությունը ավելի է նպաստում Հայաստանի խորհրդայնացման հակվածությանը: Արդյունքում «եօթի դէմ քսանհինգ քուէով որոշուեցաւ իշխանութիւնը յանձնել կոմունիստներուն»[14]:

---

12 **Ս. Վրացեան**, անդ, էջ 195:

13 **Ս. Վրացեան**, անդ, էջ 195-196: Ընդգծումը՝Գ. Գ.:

14 **Վահէ Արծրունի**, Հայ- տաճկական պատերազմը, Հայ սպայութիւնը, Ճապախ, Երեւան, 2002, էջ 333:

Այնուհետեւ Դրոյին եւ Հ. Տերտերյանին ժողովը ներկայացնում է մշակված սկզբունքներ, որոնք պետք է հիմք ծառայեին բանակցությունների համար: Դրանք էին՝ Հայաստանի անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետության ճանաչումը, Երեւանի ամբողջ նահանգը, Կարսի շրջանի մի մասը, Զանգեզուրը, Ղազախի գավառի մի մասը, որը նախատեսված էր օգոստոսի 10-ի պայմանագրով, Թիֆլիսի նահանգի այն մասը, որը Հայաստանին էր պատկանում մինչեւ հայ-թուրքական պատերազմը, խորհրդային Հայաստանի մաս համարելը, այլ սոցիալիստական կուսակցություններին եւ մայիսյան շարժումների ճնշման մասնակիցներին հալածանքների չենթարկելը[15]:

Ս. Վրացյանը եւ Դրոն նույն գիշերն իսկ անցնում են Բ. Լեգրանի մոտ եւ հայտնում խորհրդայնացման որոշման մասին: Վերջինս դեկտեմբերի 1-ին ներկայացնում է յոթ կետից պայմանագրի նախագիծ, որը լրացնելով եւ ուղղումներ կատարելով Ս. Վրացյանը եւ Դրոն դարձնում են 11 կետերից բաղկացած: Նույն օրվա երեկոյան, ՀՅԴ խմբակցության վերջին նիստում համաձայնագրի նախագիծն ընդունվում է 22 կողմ եւ 7 դեմ ձայնով[16]:

Դեկտեմբերի 2-ին, կեսօրից հետո, համաձայնագիրը ստորագրվում է Բ. Լեգրանի, մյուս կողմից՝ Դրոյի եւ Հ. Տերտերյանի միջեւ, բաղկացած ութը կետերից[17]: Դրանով Հայաստանը հայտարարվում էր անկախ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, ստեղծվում էր ռազմա-հեղափոխական կոմիտե, որին անցնում էր իշխանությունը Հայաստանում, Ռուսաստանն ընդունում էր ՀՍԽՀ-ի անվիճելի տարածքներ Երեւանի նահանգը, Կարսի նահանգի մի մասը, Զանգեզուրի գավառը եւ Ղազախի մի մասը, հայկական բանակի հրամանատարական կազմը չէր ենթարկվելու հալածանքների, ինչպես նաեւ ՀՅԴ եւ մյուս սոցիալիստական կուսակցությունները, Ռազմահեղափոխական կոմիտեի մեջ մտնում էին հինգ անդամներ նշանակված կոմկուսի կողմից եւ երկուսը՝ ձախ-դաշնակցական խմբից, Ռուսաստանը ուժեր էր կենտրոնացնելու ՀԽՍՀ անկախության պաշտպանության համար, ՀՀ կառավարությունը հրաժարվում էր իշխանությունից, որը մինչեւ հեղկոմի գալը անցնում էր զորահրամանատարությանը՝ Դրոյին եւ Սիլինին: Իսկ Հայհեղկոմը Երեւան է ժամանում դեկտեմբերի 4-ին: Այսպիսով, ավարտվում է Հայաստանի խորհրդայնացման գործընթացը, որը թերեւս նպատակահարմար էր ավելի շուտ կատարել, թեպետ դյուրին չէր ճիշտ կողմնորոշվելը Ռուսաստան-Թուրքիա-Անտանտ օղակի դիվանագիտական խաղերի մեջ: Մեզ մնում է երկու հարցի պատասխանել՝ ա) երբ արդեն որոշված էր Հայաստանի խորհրդայնացումը, ինչու էր Լեգրանը ձգտում ՀՀ կողմից դրա խաղաղ ընդունելուն, որին հասավ ի վերջո, եւ բ) արդյո՞ք կարող էր Ալ. Խատիսյանը չկնքել Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Առաջին հարցի կապակցությամբ կարելի է շեշտել, որ ռուսները թեպետ թուրքերի հետ զինադադարից հետո կտրուկ դարձրին իրենց միջամտությունը՝ Հայաստանի սահմաններում զորքեր կենտրոնացնելով, բայց նրանց ձեռնտու չէր կռվով խորհրդային կարգեր մտցնելը: Դա թուրքերի մոտ, որոնց հետ Ռուսաստանը չուներ ռազմական դաշինք, կարող

15 ՀԱԱ, ֆ. 1022, ց.3, գ. 272, թթ 42-44:

16 **Ս. Վրացեան**, անդ, էջ 200:

17 Համաձայնագիրը տե՛ս նույն տեղում, էջ 202-203, **Կ. Խաչատրյան**, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922թթ., Երեւան 2007, էջ 48, **Վ. Արծրունի**, նշվ. աշխ.,էջ 335-336, **Գ. Լազեան**, Հայաստան եւ հայ դատը, Երեւան, 1991, էջ 263-264, «Великая Октрябрьская революция и победа Сожетской власти в Армении (Сборник документов)», Ереван. 1957, էջ 441 եւ այլն:

էր տպավորություն ստեղծել, թե իրենց դեմ է ուղղված կարմիրների մուտքը, քանի որ թուրքերի կողմից Հայաստանին հեշտ էր ներկայացնել Անտանտի դաշնակից: Իսկ Հայաստանի խաղաղ իշխանափոխությունը իրենց հիմք կտար կանգնեցնելու թուրքերին:

Իսկ կարո՞ղ էր Ալ. Խատիսյանը չկնքել Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Մինչև այդ նշենք, որ այն ստորագրվել է դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը, ժամը 2-ին, Հայաստանում իշխանափոխությունից հետո, եւ օրենքի ուժ չուներ: Թուրքերն ավելի շուտ էին ուզում հասնել դրան, քանի դեռ Հայաստանը չէր խորհրդայնացվել, բայց չկարողացան: Բազմիցս գրվել է, որ Ալ. Խատիսյանը այդ քայլին դիմել է ստիպված, Դրոյի անորոշ պատասխանից հետո, ինչպես նաեւ Կարաբեքիրի՝ դեպի Երեւան շարժվելու սպառնալիքից դրդված: Բայց մենք կարծում ենք, որ Ալ. Խատիսյանը, եթե չստորագրեր պայմանագիրը, թուրքերը հազիվ թե առաջ շարժվեին դեպի Երեւան, քանզի դա կնշանակեր կռիվ խորհրդային իշխանության դեմ: Փաստորեն, այդ դաշնագիրը կնքվել է պետություն չներկայացնող մասնավոր անձանց եւ թուրք պատվիրակության միջեւ, որի նախօրինակը չկա թերեւս ոչ մի միջազգային դաշնագրում: Մնում է տալ այն չարչրկված հարցի պատասխանը, թե ինչո՞ւ բոլշեւիկները նույն պահին այն չեղյալ չհամարեցին: Այս հարցի պատասխանը շատերն են փորձել տալ, այն է, թե դրանով Խորհրդային Ռուսաստանը ինքն իրեն ազատում էր մեղքի պատասխանատվությունից՝ այն գցելով դաշնակցականների վրա: Այստեղ միգուցե ճշմարտություն կա: Բայց, չմոռանանք, որ ռուսներին ամենեւին ձեռնտու չէր թուրքական արշավանքից հետո մնացած սահմաններով Հայաստանի խորհրդայնացումը: Ուրեմն, նրանք այդպես վարվեցին ոչ միայն նրա համար, որ նախապես թուրքերի հետ գծել էին Հայաստանի սահմանները այդ ձեւով, բայց տպավորություն էին ստեղծում, թե դա արել են դաշնակցականները, այլ՝ որ նպատակահարմար չգտան նրան պարտադրել այլ սահմաններ՝ իրենց իսկ աճեցրած քեմալական Թուրքիային որպես դաշնակից կորցնելու վախով պայմանավորված: Կարծում ենք, որ սա է ճշմարտությունը:

Այսպիսով, ա) Թուրքերի զինադադարի պայմանները եւ Ալեքսանդրապոլի բանակցությունների սկսվելը ստիպում են Խորհրդային Ռուսաստանին՝ արագացնելու Հայաստանի խորհրդայնացման գործընթացը՝ ամբողջովին այն չկորցնելու նպատակադրումով, բ) Թուրքերը ձգտում են արագորեն պայմանագիր կնքել Հայաստանի հետ, մտածելով, որ կարող է հակառակ դեպքում ռուսները խորհրդայնացված Հայաստանի համար պահանջեն ավելի լայն, առնվազն մինչեւ 1914 թվականի սահմանները, գ) Հայաստանի խորհրդայնացումից հետո ռուսները նպատակահարմար չեն գտնում թուրքերին պարտադրել թեկուզ 1914թ. սահմանները, ռուս-թուրքական հարաբերությունների վատթարացման վախով պայմանավորված, դ) Խորհրդային Ռուսաստանը եւ քեմալական Թուրքիան իրենց միջեւ Հայաստանը բաժանված են ընդունում այն սահմաններով, որոնք ընկած էին Ալեքսանդրապոլի օրենքի ուժ չունեցող պայմանագրի կետերում: Եւ այդ պայմանագրի սկզբունքները պահպանվեցին հետագայում: